

Անառակ որդու առակը

«Հայր մեղանչեցի երկմֆի դեմ ու քառեցի,
այլես արժանի չեմ քո որդին կոչուելու»:
Ղուկ. ԺԵ:21

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ: Մեծ Պահոց այս կիրակին կրում է «Անառակի կիրակի» անուանումը: Մեզ բոլորիս քաջածանօթ այս առակից է վերցրած քարոզչութեանս բնաբանը: Այո՛, ծանօթ է մեզ առակը իր բոլոր մանրամասնութիւններով: Բայց չգիտեմ, կա՞յ աշխարհում մի որեւէ դէպք կամ երեւոյթ, որն ինչքան ուսումնասիրում, կարդում ու մեկնում ես, այնքան անկի է դառնում անհուն ու անմեկնելի: Եթէ չկայ այդ երեւոյթը, ապա «Անառակ որդու» առակը այդպիսին է: Պարզ, ինչպէս տուն դարձող որդու աչքերից գլորուող արցունք, ցանկալի՜ ինչպէս հորեմակամ տա՛մ ու անպա-
նայն տունը, բայց քարդ ու առեղծուածային՝ ինչպէս իմը կեանքը:

Հայրը ունէր երկու զաւակ: Նրանցից կրտսերը հորից պահանջեց իրեն քաժին հասնող ժառանգութիւնը: Հայրն իր ունեցուածքը քաժանեց նրանց: Կրտսեր որդին ծախեց իրեն հասանելիքը, դրամի վերածեց ու գնաց հեռու երկրներ: Կեանքի ցոփութիւն ու հանդիմանք սիրող երիտասարդը շուտով վատնեց իր ռոյ դրամն ու ունեցուածքը, որովհետեւ անառակ կեանք էր վարում: Այս երկրում սաստիկ սով եղաւ, եւ նա չփառորութեան մէջ ընկաւ: Ստիպուած էր դիմել այդ երկրի քաղաքացիներին՝ աշխատանք խնդրելու համար: Նրանցից մէկն իր ազարակն ուղարկեց թշուառ երիտասարդին, որպէսզի խոգեր արածեցնի: Սովն ու կարիքը ստիպում էին նրան, որպէսզի գտնէ խոգերին տրուող կերակուրով որովայնը լցնէր, բայց դա էլ չէին տալիս իրեն:

Եւ յիշեց անառակ որդին հայրենի տունը, իր հայրը, եղբայրը: Յիշեց՝ որ մոյնիսկ վարձկանները կուշտ փորով հաց էին ուտում իրենց յարկի տակ, իսկ ինքն այստեղ սովամահ է լինում: Եւ որոշեց անառակ որդին տուն վերադառնալ: Ու ճամբայ ընկաւ դէպի տուն արտասուքն աչքերին: Ծաւից ու յոգնածութիւնից քայլում էր անառակ որդին հորեմակամ տուն տանող ճանապարհով՝ ամօթապարտ ու գլխահակ: Նա իր մտքերի հետ է. յիշում է, թէ ինչպէս տարիներ առաջ լեցե տունը, ինչպէս գեղող հանդիմանքն ու խօլական շուայտութիւնները զինք կեանքի ծովի յատակը մետեցին: Մտածում ու փնտրում է արդարացուածներ, հոր սիրտը շարժող խօսքեր:

Հայրը հեռուից տեսնում է որդուն եւ վազում դէպի մա: Հայրն էլ իր հերթին մտածում խօսքեր: Լեզուն ու միտքը թելադրում են նրան քառեր յանդիմանաճի ու մախատիճի: Բայց սիրտը կրկնում է անընդհատ. «Ես սպասում էի քո վերադարձին, ես վազում եմ քեզ ընդառաջ, որովհետեւ սիրում եմ քեզ»:

Եւ հասնում են իրար հայր ու որդի: Եւ ի՛նչ: Նախատիճի խօսքե՞ր, ինքնարդարացման ճառե՞ր, յանդիմանաճի, ինքնապաշտպանութիւն: Ոչ մէկը, ոչ միւսը եւ ոչ էլ երրորդը:

Փլուում է անառակ որդին իր այնքան կարօտած գիրկը հայրական, ինչպէս պտուղը հարգաւոր ծառից, գրկում է հայրը մօլորեալ որդուն այնքան ջերմութեամբ ու գորովամեղով: Եւ լուծիւն: Միայն երկար լուծիւնից յետոյ. «Հայր մեղանչեցի երկմֆի ու քառեցի, այլես արժանի չեմ քո որդիդ կոչուելու»:

Հայրը որդուն չի պատասխանում, այլ դիմում է ծառաներին. «Հանեցէ՛ք մախկին պատմեմանը եւ հագցրէ՛ք մորը, մատանին դրէ՛ք մատը, իսկ ոտքե-
րին՝ կօշիկներ: Բերէ՛ք պարարտ եղը, մորթեցէ՛ք, ուտեմք եւ ուրախանաճ, որովհետեւ իմ այս որդին մեռած էր եւ ողջացաւ, կորսուած էր եւ գտնուեց»:

Դժգոհ է միայն աւագ որդին. «Հայր, ես քանի՞ տարի է ծառայել եմ քեզ լուռ ու անտրտմեղ, մի ուլ անգամ չես մորթել ինձ համար: Իսկ քո շառլա-
տան որդին, որ մսխեց իր ունեցուածքը, դու պարարտ եղը նրա համար մորթեցիր»: Հայրը պատասխանեց. «Որդի՛ս, որ միշտ ինձ հետ ես եղել, եւ ինչ իմա է, քանն է: Բայց այսօր պէտք է ուրախանաճ, որովհետեւ քո եղ-
բայրը մեռած էր եւ ողջացաւ, կորսուած էր եւ գտնուեց»:

Սա է առակի բովանդակությունը: Առաջին հայացքից պարզ, ինչպես մի կաթիլ ջուր, բայց և անմիանալի բարդ, ինչպես ծովի անհունը: Փորձենք իջնել յատակը ծովի եւ այնտեղից համել այն իմաստութեան մարգարիտները, որոնք մեզ առակն է սուղորեցնում:

Նախ հօր մեծ սերն ու ներումը կարելի է տեսնել հենց առակի սկզբից. «Եւ հայրը բաժանեց իր ունեցումա՞ծը...»: Յետո՞յ ինչ, կ'ասէ՞ ղու: Յետոյ այն, որ ըստ հրեական օրենքի ունեցումա՞ծը եւ ժառանգութիւնը հայրը բաժանում է իր մահուան սեմին: Հակառակ դէպքում ժառանգութիւնը շուտ պահանջող որդին ցանկանում է հօր մահը եւ արժանի է անեծքի ու պարսուսանքի, նոյնիսկ քարոծման: «Իսկ հայրը լուռ բաժանում է իր ունեցումա՞ծը»:

Առակի միւս մարգարիտը: Հայրը չի համոզում որդուն տանը մնալու, չի գնում որդու ետեւից, մարդիկ չի ուղարկում փնտռելու նրան: Մինչդեռ միւս առակներում հավիւր գնում եւ փնտռում է կորած ոչխարը, կիւնը ճրագով փնտռում եւ ալելուվ գտնում է կորած դրամը, որոնք նոյնպէս մոլորեալ հոգիներն են խորեղանշում: Իսկ այստե՞ղ: Միւս երկու առակներում կորածներն անգիտակից էին եւ ետդարձի ճանապարհ չէին կարող ունենալ: Իսկ այստեղ հայրը տալիս է որդուն իր ազատ ընտրութեան իրաւունքը: Նա չի կարող բռնանալ որդու վրայ, դա անարդար կը լինէր: Դա կը լինէր որդիական սեր ու հնազանդութիւն մուրայ: Դա կը մտնուէր նրան, որ մեծք որեւէ մէկին ստիպէինք որ մեզ սիրի: Դա չի լինի: Աէրը պարտադրանք ու ստիպողականութիւն չէ, այլ՝ ինքնաբերական դրսեւորում: Եւ հայրը տալիս է իր որոշումը. «Գնա՛ ու փորձու՛ի՛ր»: Իսկ սրտի մի թափում անկիւնում փայփայում որդու վերադարձի յոյսը: Հայրը միշտ կրտսեր որդուն հետ է եղել մտկերով: Նա սպասել է անհամբեր: Իրդին պէտք է վերադառնայ, նա անպայման կը վերադառնայ: Եւ ահա փոշոտ փոռոցում նա տեսնում է իր մոլորեալ որդուն: Եւ հայրը վազում է դէպի նա: Հայրը վազում է ...

Աւագ որդին փարիսեցու կերպար է: Ինչպէս փարիսեցին է իր հաւատքը չափելու յարմար ձեւ որոշել, այն համեմատելով ուրիշների հետ, այնպէս էլ աւագ որդին իր հայրը սիրելու չափանիշ է վերցրել կրտսեր եղբոր անառականութիւնը: Աւագ որդին հօր մօտ մնում է ոչ թէ հօրը սիրելուց, այլ աւելի որդիական պարտականութիւնից դրդուած, օրենքից ելնելով: Իսկ օրենքը փրկութիւն չէ:

Այլ է կրտսեր որդին: Նա գալիս է հօր գիրկը կեանքի հանելուկը լուծած, աշխարհի թռի մէջ թրծուած: Նրա դարձը վերջնական է, անբեկանելի: Նա սիրում է իր հայրը, նա տուն է դառնում...

Տունդարձ: Որքա՛ն քաղցր է այդ քաղցը հնչում: Այս յարիւրիներու աշխարհում վազը ու առիւծ, ձուկ ու թռչուն, ծառ ու ծաղիկ իրենց տեղը գտել են կարծես: Միայն մարդն է դեգերում ու փնտռում, եւ չի գտնում իր տեղը: Միայն մեծք ենք որ ոչ մի կերպ չենք յարմարում այս աշխարհին: Ինչու՞: Որովհետեւ մենք այս աշխարհի համար չենք ստեղծուած: Զե՛ք մկատել. մենք միշտ փնտռում ենք մի տեղ, մի վայր, մի երկիր, ուր մեզ վստահ ենք, որ երջանիկ ենք գգայու: Մենք մոլորեալ վիճակի մէջ ենք, որովհետեւ մենք այստեղի համար չենք, մենք այս աշխարհի անառակ որդիներն ենք: Մենք մի ուրիշ վայրի համար էինք ստեղծուած ուր երջանիկ էինք: Մտաքցել ենք, մոլորուել ենք, բայց փորձենք յիշել, փորձենք աշխատեցնել մեր թափած ուղեղն ու յիշողութիւնը. «Եւ Աստուած Նդեմի մէջ պարտեզ տնկեց եւ իր ստեղծած մարդը դրեց այնտեղ: Եւ երջանիկ էր մարդն այնտեղ...»:

Այնտեղ է մեր տունը, եւ մեր Հայրը սպասում է մեզ աշխարհի թռի ու թռիկ, կեանքի խելայեղ վազքի մէջ խարխափող իր մոլորեալ որդիների վերադարձին: Փնտռենք ու գտնենք արհայութիւն առաջնորդող մեր մնայուն տան նմանապարհը:

Տունդարձի ժամանակն է... Ժամանակն է աղաչագին ու ծնկածեծ ընկնել մեր Հօր գիրկը ներում հայցելով, որին վայել է փառք եւ երկրպագութիւն յաւիտեանս յաւիտեանից, ամէն: